

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՅԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀԱՅԱՐՓԻ ԱՂԱԽԱՆՅԱՆ

Հասարակական գիտակցության առաջընթացի ու գիտությունների զարգացման պատմության շրջադարձային փուլերից մեկը թերևս պետք է համարել գրատպության գյուտը, որը թե՛ քանակապես և թե՛ որակապես փոփոխության ենթարկեց գրի, գրքի ու գիտելիքի մասին պատկերացումները: Ինքնին հասկանալի է, որ տպագրության գյուտին ամենաառաջինը պետք է արձագանքեին աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդները, և առավել հատկանշական է, որ այդ ժողովուրդների շարքում առաջամարտիկներից էին նաև հայերը: Գուտենբերգի հայտնագործությունից (1440 թ.) ոչ շատ երկար ժամանակ անց՝ 1512 թ., Վենետիկում լույս է տեսնում հայերեն առաջին տպագիր գիրքը: Այնուհետ աշխարհի հայաշատ գաղթօջախներում, ինչպես նաև մայր հայրենիքում սկսում են հիմնվել տպարաններ ու տպագրվել բազմաթիվ ու բազմաբովանդակ հայալեզու գրքեր:

Ուստի այսօր, որպես տպագիր գրքի հինգհարյուրամյա պատմություն ունեցող ժողովուրդ, մենք պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրենք հայ տպագիր գրքի պատմությունը՝ բացահայտելու այն նախադրյալները, որոնք հիմք դարձան հայալեզու տպարանների հիմնադրման ու գրքերի տպագրության համար, ուսումնասիրելու այն դրդապատճառները, որոնք ստիպեցին որոշ հայորդիների հսկայական ջանքերով ու մեծագույն ծախսերով հիմնելու հայալեզու տպարաններ, և վեր հանելու, թե հատկապես ինչպիսի գրականություն էր տպագրվում, և հայ հասարակության որ դասի պահանջմունքների բավարարման էր այն միտված:

Այսպես, հայկական տպարանների հիմնադրման պատմության ուսումնասիրությունից պարզվում է, որ հայալեզու տպարանատերերի շարքում առանձնակի տեղ են գրավել հատկապես հայ վաճառականները, ովքեր տպարաններ հիմնել են ոչ միայն և ոչ այնքան նյութական շահ ստանալու նպատակով, ինչպես կարծում էին 19-20-րդ դարերի հայ մտավորականներից շատերը¹, որքան մեր ժողովրդի հոգևոր զարգացման ու լուսավորության տարածման վեհ նպատակներից ելնելով²: Բավական է մատ-

¹ Գ. Ջարբխանյանն ու Գ. Լևոնյանը, օրինակ, հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտին համարում են վաճառական ու եզրակացնում, որ ինչպես Հակոբ Մեղապարտի, այնպես էլ առհասարակ տպագրական գործունեությամբ զբաղվող բոլոր վաճառականների նպատակը գրքերի վաճառքից նյութական շահ ստանալն է եղել, իսկ Ա. Հովհաննիսյանը հայ վաճառականների գործունեության մեջ ոչ միայն որևէ դրական գիծ չի տեսնում, այլև նրանց ներկայացնում է որպես շահամոլ, ապագային ու ապաքաղաքական մի դաս, որը միայն անձնական շահ է հետապնդել (այդ մասին մանրամասն տե՛ս, օրինակ, **Յ. Յ. Աղախանյան**, Հայ վաճառականության տպագրական գործունեության վերագնահատության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, թիվ 3, էջ 67-76):

² Տե՛ս նույն տեղը:

ճանաչել միայն ազուլեցի խոջա Գուլնազարի որդի Նահապետին, ով իր ամբողջ կարողությունն ի սպաս է դնում 1687 թ. Վենետիկում տպարան հիմնելու և «Պարզաբանութիւն հոգեմուսազ սաղմոսացն Դաւթի մարգարէին» գիրքը տպագրելու համար³:

Ավելին, առաջին հայալեզու գրքերի առաջաբաններն ու հիշատակարանները փաստում են, որ հայ վաճառականները ոչ միայն տպարաններ են հիմնել, այլև հովանավորել են աշխարհի տարբեր երկրների տպարաններում հայալեզու գրքերի տպագրությունը: Ուստի, ուսումնասիրելով հիմնականում 1512-1800 թթ. տպագրված շուրջ 1095 գրքերի⁴ առաջաբաններն ու հիշատակարանները, փորձենք տեսնել, թե ինչպիսի դերակատարություն է ունեցել հայ վաճառականությունն առհասարակ հայ գրքի տպագրության պատմության տեսանկյունից, և հատկապես ինչպիսի գրականություն է լույս տեսել վաճառականության նյութական հովանավորությամբ: Պարզվում է, որ 17-18-րդ դարերում տպագրված գրքերի գրեթե կեսը լույս աշխարհ է եկել ջուղահայերի պատվերով ու դրամական միջոցներով⁵: Իսկ մեր մոտավոր հաշվարկներով այդ գրքերից ավելի քան 300-ի հիշատակարաններում ուղղակի նշվում են վաճառական-տպարանատերերի ու հովանավոր վաճառականների անունները⁶: Հասկանալու համար, թե ինչ նպատակներով և հատկապես ինչպիսի գրքերի տպագրությունն էին հովանավորում հայ վաճառականները, փորձենք փոքր-ինչ դասդասել լույս տեսած գրքերը:

Այդ գրականության մեջ, բնականաբար, պատկառելի թիվ են կազմում վաճառականների գործունեությանն անմիջականորեն առնչվող գիտություններին նվիրված աշխատությունները, ի մասնավորի՝ մաթեմատիկական, հաշվապահական, երկրաչափական, աշխարհագրական ու տոնարագիտական:

Մաթեմատիկայի ու հաշվապահության բնագավառներին առնչվող կարևոր աշխատություններից մեկը «Արհեստ համարողութեանն» է, որը տպագրվել է Մարսելում 1675 թ.: Այն աշխարհաբար լույս տեսած առաջին տպագիր գիրքն է, որի առաջաբանում կարդում ենք. «Տեսանելով զհարկաւորութիւնն մերազնեայց վաճառականաց վասն կատարելապէս ոչ գիտելոյ զարհեստն համարողութեան, վայելուչ վարկաք զգիրզս զայս թարքմանել ի մերս բարբառ, որպէսզի սովաւ վարժեցեալք կարիցեն դիւրապէս պարապիլ ի գործս իւրեանց թարց դեգերման մտաց»⁷: Գրքում ներկայացված են թվաբանական չորս գործողությունները և վաճառականական

³ Այդ մասին մանրամասն տես **Յր. Ղ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 119-125, **Յ. Յ. Աղախանյան**, նշվ. աշխ., էջ 72-73:

⁴ Տես **Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան**, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988:

⁵ Այդ մասին տես **Յր. Ղ. Միրզոյան**, Նոր Ջուղայի ֆենոմենի պատմափիլիսոփայական վերլուծության փորձ, «Իմաստասիրական անդրադարձներ», Եր., 2006, էջ 27:

⁶ Այս թիվը խիստ հարաբերական է և փոքր այն իմաստով, որ շատ գրքերի հիշատակարաններ չեն պահպանվել, իսկ մի շարք գրքերում էլ ուղղակի նշված չեն վաճառականների անուններ, բայց հիշատակարանները, փաստորեն, նրանց մասին են ակնարկում:

⁷ **Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 74:

տարբեր հաշիվների հետ կապված տրամաբանական խնդիրներ: «Արհեստ համարողութեանը» կազմվել է հատկապես հայ վաճառականության գործնական պահանջներին բավարարման նպատակով, ինչի վառ արտահայտությունը մի կողմից գրքի փոքր չափսերն են, որպեսզի վաճառականը կարողանար այն մշտապես իր գրպանում ունենալ, մյուս կողմից՝ հայերեն խոսակցական, աշխարհաբար լեզվով թարգմանությունը, որպեսզի հասկանալի լիներ բոլոր վաճառականներին:

Հայ վաճառականության մասնակցությունը համաշխարհային առևտրին նշանակում էր ներգրավվածություն բազմազան ու բազմաբնույթ առևտրական հարաբերությունների, ուստի վաճառականը պետք է կարողանար հաշվարկներ կատարել՝ նկատի ունենալով ոչ միայն ներդրվող դրամազուլիքը, այլև առևտրական ճանապարհորդության տևողությունը, հնարավոր անսպասելի ծախսերը, վտանգները: Սա նշանակում է, որ թվաբանական պարզ գործողություններ կատարելուց զատ՝ հայ վաճառականներից պահանջվում էին զանազան գիտելիքներ ու հմտություններ, որոնք յուրացնելու համար միայն գրքերի առկայությունը բավարար չէր: Եվ որպեսզի առավել արդյունավետ լիներ հայ առևտրական դասին համապատասխան գիտելիքներով զինելու գործընթացը, Խաչատուր Կեսարացու ջանքերով Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքին կից հիմնվում է դպրոց, որտեղ առաջնահերթ ուշադրություն էր դարձվում աշակերտներին առևտրական կյանքի վերաբերյալ զանազան գիտելիքներ տալու հանգամանքին: Այդ նպատակով Կեսարացու հիմնած դպրոցի ակադեմիկոս ուսուցիչ Կոստանդ Ջուղայեցին 1685 թ. սկսնակ վաճառականների համար կազմում է մի ժողովածու-դասագիրք՝ «Աշխարհաժողով» կամ «Վասն նորահաս մանկանց եւ երիտասարդ վաճառականաց խրատ» վերնագրով, ուր փորձում է հնարավորինս մանրամասնորեն ներկայացնել տարբեր երկրների առևտրաշահ քաղաքներում գործածվող չափ ու կշռի, դրամական միավորների, ներմուծվող ու արտահանվող ապրանքատեսակների, հարկերի, վարկերի ու մաքսերի վերաբերյալ տեղեկատվություն՝ այդ ընթացքում քննարկելով նաև բարոյագիտական հարցեր ու կատարելով անչափ հետաքրքրական դիտողություններ ժողովուրդների կենսամակարդակների տարբերությունների վերաբերյալ: Այս երկը հետագայում հիմք է դարձել 1699 թ. Ամստերդամում Ղուկաս Վանանդեցու հեղինակած նմանատիպ մեկ այլ՝ «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» բարձրարժեք աշխատության համար, որի պատվիրատուն «Ջուղայեցի բարեպաշտ Պարոն Պետրոսն» էր, բայց Վանանդեցին իր հերթին ճիգ ու ջանք չի խնայել գիրքը պարզ ու հատկապես հայ վաճառականների համար հասկանալի եղանակով շարադրելու համար, քանի որ աշխատության ստեղծման հիմնական նպատակն ու դրդապատճառը «ի յօգուտ մերազնեայ վաճառասէր եղբարց»⁸ որևէ գործ անելն էր: Այդ մասին է փաստում արդեն այն հանգամանքը, որ գրաբար է միայն վերնագիրը, իսկ ամբողջ բովանդակությունը շարադրված է աշխարհաբարով՝ Ջուղայի խոսակցական պարզ լեզվով: Իր դարաշրջանի համար անհրաժեշտ մաթեմատիկական գիտելիքներից բացի՝ այս գիրքը պարունակում է փիլիսոփայա-

⁸ **Ղուկաս Վանանդեցի**, Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 3:

կան հետաքրքիր հարցադրումներ առ այն, որ չափի, կշռի ու դրամական միավորների և ընդհանրապես առևտրի մասին պատկերացումները քարացած չեն և ենթակա են փոփոխության: Եվ քանի որ չափի ու կշռի միավորները մարդկանց միջև պայմանավորվածություններ են, ուստի «յայտնապես միշտ՝ և հանապազ կու տեսնունք՝ քաշից՝ դրամից՝ և ապրանագ դիմաթի փոփոխումն»⁹, իսկ սա նշանակում է, որ հաջողություն ակնկալող յուրաքանչյուր առևտրական պետք է հետևի փոփոխությունների այդ գործընթացին: Հետևապես, վաճառականները պետք է կարողանային այնքան ճկուն լինել, որ հարմարվեին ինչպես դրամական տարբեր միավորներով առևտուր անելու գործընթացներին, այնպես էլ առավել հարմար ու կիրառելի եղանակները ներմուծելին իրենց հաշվապահական համակարգ:

Հայ վաճառականության գործնական պահանջումները բավարարման նպատակով մաթեմատիկական գրքերից բացի՝ շուտով թարգմանվում ու տպագրվում է նաև երկրաչափությանն առնչվող գրականություն: 17-րդ դարում թարգմանվում է Էվկլիդեսի «Երկրաչափությունը»: 1794 թ. Մխիթարյանների Ս. Ղազարի տպարանում երկու հայ վաճառականների նյութական աջակցությամբ լույս է տեսնում Սահակ Բերիացի Պրոնեանի «Երկրաչափութիւն» աշխատությունը, որի առաջաբանում հեղինակը ներկայացնում է այս գիտության «բազում կենցաղօգուտ պայծառութիւնք» և սահմանում այն որպես «նախադուռն, մայր, և թագուհի գոլով բնաւից մաթեմաթիգական գիտութեանց»¹⁰: Հեղինակը նշում է, որ երկրաչափությունից են բխում թվաբանությունը, աստղաբաշխությունը, երաժշտությունը, որոնցից էլ մարդիկ և հատկապես վաճառականները մեծ նպաստ ու օգուտ են ստանում գործնական կյանքում:

Հայ վաճառականության գործնական պահանջումներից ելնելով՝ աննախադեպ զարգացման է հասնում նաև աշխարհագրությունը: Այսպես՝ «XVII դ. մեզանում ամենից վաղ ու ամենից արագ սկսում է զարգանալ աշխարհագրությունը»¹¹: Բանն այն է, որ համայն աշխարհով մեկ շրջող հայ վաճառականը հատկապես աշխարհագրական գիտելիքների կարիք ուներ, քանի որ իր գործն առավել հեշտացնելու նպատակով նրան անհրաժեշտ էին նաև քարտեզներ: Այս տեսանկյունից կարևոր աշխատանք է կատարել XVII դ. ականավոր մտավորական Ղուկաս Վանանդեցին՝ 1696 թ. հրատարակելով, «Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի» և «Համատարած աշխարհացոյց»¹² աշխատությունները. վերջինս կիսագնդերը ներկայացնող քարտեզ էր¹³:

Հայ վաճառականության գործնական պահանջումների բավարարման նպատակով աշխարհագրությունից բացի հաջողությամբ զարգանում

⁹ Նույն տեղում, էջ 53:

¹⁰ **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 691:

¹¹ **Հր. Ղ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 75:

¹² **Ղուկաս Վանանդեցի**, Բանալի համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի, Ամստերդամ, 1696:

¹³ Հատկանշական է, որ Պետրոս Մեծն այնքան է կարևորել այդ քարտեզի քաղաքական, աշխարհագրական ու առհասարակ գիտական արժեքը, որ անգամ պատվիրել է այն տպել ռուսերենով (այդ մասին տե՛ս **Մ. Խաչատրյան**, Հայ և ռուս քարտեզագրության կապերը XVII դ., «Պատմա-բանասիրական հանդես», 1966, թիվ 2):

է նաև տոմարագիտությունը: Հայկական ծաղկուն գաղթօջախներում լույս են տեսնում նաև այս ոլորտին առնչվող մի շարք աշխատություններ: Օրինակ, 1698 թ. Ամստերդամում Դուկաս Վանանդեցին տպագրում է «Տօմար»՝ «Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց Հռօմայեցւոց, Ազարիայի, Հայոց, Հրէից, և Տաճկաց»¹⁴: Տարբեր ազգերի տոմարները մեր տոմարի հետ համադրելու ու համաձայնեցնելու նպատակը թերևս այն էր, որ աշխարհասփյուռ հայ վաճառականությունը կարողանար ժամանակի առումով ճիշտ կողմնորոշվել իր առևտրական գործունեության ընթացքում: Վանանդեցու տպագրած այս աշխատությունն այնքան լավ է համակարգված, որ առանց չափազանցության կարելի է համարել «17-րդ դ. հայ տոմարագիտության անուրանալի նվաճումներից»¹⁵:

Այն, որ տոմարագիտությունը զարգանում էր առաջին հերթին բավարարելու համար հայ վաճառականության պահանջմունքները, վկայում է հատկապես 1778 թ. Տրիեստում լույս տեսած «Տօնացոյց տարեկան» վերնագրով գիրքը: Ուշագրավ է, որ այնտեղ շարադրված են ինչպես հայոց տոները, պահքի ու ծոնապահության օրերը, արշալույսի ու մայրամուտի ժամերը, լուսնի ծագման և լրման օրերը, այնպես էլ «արժողութիւն ոսկւոց և շահ դրամոց» «առ ի դիւրութիւն վաճառականաց Հայոց Թրանսիլվանիոյ»¹⁶: Սա նշանակում է, որ տպագրիչները քաջ գիտակցում էին, որ տարեկան տոնացույցն առաջին հերթին պետք էր գալու հայ վաճառականությանը, որին, սակայն, հետաքրքրում էին ոչ միայն պահքի ու ծոների օրերը, արեգակի ու լուսնի հետ կապված օրինաչափությունները, այլև ոսկու արժողությանը, դրամին, տոնավաճառներին վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ, ուստի գրքի մեջ ներառել են նաև այդ կարգի բազմաբնույթ գիտելիքներ:

Եվ քանի որ հայ վաճառականները, ի թիվս այլ ապրանքների, մեծապես զբաղվել են նաև թանկագին քարերի առքուվաճառքով, ուստի կրկին վաճառականության գործնական պահանջմունքների բավարարման տեսանկյունից մեծ պահանջարկ են վայելել նաև թանկագին քարերի բնութագրություններ պարունակող ցանկերը: Որպես այդպիսին մեզ է հասել Առաքել Դավրիժեցու պատմության վերջին էջերում տրված հավելվածը¹⁷:

Վերոնշյալից բացի՝ հայ վաճառականները նյութապես աջակցել են նաև կրոնական գրականության տպագրությանը: Մեր մոտավոր հաշվարկներով 1512-1800 թթ. հայ վաճառականության անմիջական նյութական աջակցությամբ ու պատվերով տպագրվել է կրոնական բովանդակությամբ շուրջ 150 գիրք, այդ թվում՝ Աստվածաշունչն ամբողջությամբ, առանձին Ավետարաններ, բազմաթիվ ժամագրքեր, ճաշոցներ, Սաղմոսարաններ ու Աղոթատետրեր: Առաջնորդվելով քրիստոնեական բարոյականության արժեքներով և բարերարությունը համարելով անմահության հասնելու ամենադյուրին ուղի¹⁸ հայ վաճառականները կրոնական գրականության լույս ընծայումը կատա-

¹⁴ **Ն. Ոսկանյան, Զ. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., Եր., 1988, էջ 123:

¹⁵ **Հր. Ղ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, էջ 80:

¹⁶ **Ն. Ոսկանյան, Զ. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 512:

¹⁷ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Գիրք Պատմութեանց, Եր., 1989, էջ 441-456:

¹⁸ Մեջբերումն ըստ՝ **Խ. Դադայան**, Հայ վաճառականի վարքականոնային ուրվապատկերը, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, № 2 (18), 2006, էջ 47:

րուն էին ոչ թե հանուն սեփական «մարմնաւոր օգտի և շահասիրութեան», «այլ վասն հոգեկան մխիթարութեան ազգին հայկազունեայ»¹⁹ և ի հիշատակ ինչպես իրենց, այնպես էլ իրենց հանգուցյալ հարազատների:

«Աստուածատէր վաճառականաց» հոգևոր պահանջմունքները բավարարելու նպատակով վաճառականության հովանավորությամբ տպագրվում են նաև պատմագիտական երկեր: Այդպիսիք էին, օրինակ, Ագաթանգեղոսի «Գիրք վիպասանութեան» և Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» աշխատությունները: Ավելին, շուտով թարգմանվում ու տպագրվում են նաև այլ ազգերի պատմությանն առնչվող երկեր, ինչպես, օրինակ, Յովսէփոս Փլավիոսի «Պատմութիւնք Յաղագս Պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս», Հանուէի «Պատմագրութիւն Վարուցն և գործոց Նադըր Շահ թագաւորին պարսից» և պատմագիտական շատ այլ երկեր, որոնց մեծ մասի հիշատակարաններում տպագրիչները խնդրում են ընթերցողին չմոռանալ հայ խոջաներին, աղաներին, պարոններին ու նրանց գերդաստաններին, քանզի նրանք «բազում ծախս ծախեցին և ետուն տպել» այդ գրքերը:

Այս համատեքստում առավել ուշագրավ է աղա Մարգար Շահրիմանյանի «Թուղթք Ձչինաց» աշխատությունը: Աղա Մարգարը Շահրիմանյան մեծանուն առևտրական տան հայտնի վաճառականներից էր և գործի բերումով քառասուն տարի շրջել էր Արևելյան Հնդկաստանի տարբեր ցեղերի մէջ: Առևտրական ճանապարհորդությունների ընթացքում նրա ուշադրությունից չէին վրիպել տարբեր ազգերի ու մարդկանց հավատին, սովորություններին ու բարքերին առնչվող հարցերը: Ամենուր, ասում է հեղինակը, «հանապազ հարց փորձ առնէի նոցա վասն հաւատոց, սովորութեանց, և արարողութեանց նոցա՝ որչափ կարօղ եղէ»²⁰: Բայց քանի որ հոգնեցուցիչ առևտրական ճանապարհորդությունների պատճառով չափազանց քիչ ազատ ժամանակ է ունեցել ու չի հասցրել իր կուտակած գիտելիքները և հմտությունները թղթին հանձնել, ըստ այդմ ավստասանքով հայտնում է, որ «այժմ ավաղեմ զանձն իմ, զի զոր ինչ հմտացայ ի նոցանէ, ոչ եղի ի թղթի որով զիրք մեծ կարէր լինել»²¹: Այսինքն՝ եթե ժամանակին կարողանար իր գիտելիքները թղթին հանձնել, ժողովուրդների բարքերի ու սովորությունների, մշակութային առանձնահատկությունների մասին պատմող մի մեծ գիրք կարող էր ստացվել: Հետագայում, երբ արդեն ժամանակ ուներ, բայց, ավաղ, այլևս իր տեսածներն ու լսածները նույնությամբ վերարտադրելու հնարավորություն չուներ, որոշում է ունեցած գիտելիքներն ի սպաս դնել և թարգմանել իրեն ծանոթ մի ժողովրդի պատմություն: Այս տեսակետից արժեքավոր է համարում «Թուղթք Ձչինացը», որտեղ շարադրված են մանրամասն տեղեկություններ Չինաստանի պատմության, ազնվականության, ժողովրդի բնավորության, բարքերի, լեզվի և այլնի մասին: Աղա Մարգարը, փաստորեն, այս աշխատությունը թարգմանել է, որպեսզի հատկապես իր գործընկերներին ծանոթացնի Չինաստանի ժողովրդի մշակութային առանձնահատկություններին, նրանց բարքերի ու սովորությունների համա-

¹⁹ **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 105:

²⁰ Նույն տեղում, էջ 544:

²¹ Նույն տեղում:

կարգին, քանի որ այդ ամենի իմացությունն առաջին հերթին վաճառականներին էր հարկավոր:

Պատմագիտական գրականությունից գատ` հայ վաճառականության հովանավորությամբ տպագրվում էր նաև իրավագիտական գրականություն: Այսպես, 1773 թ. Սադրասուն` Հակոբ Շահամիրյանի տպարանում, վերջինիս անունով տպագրվում է «Որոգայթ Փառացը», որը Հայոց աշխարհում այնքան բաղձալի պետության կազմակերպման սկզբունքների, կառավարման համակարգի ու օրենքների ամբողջություն էր: Քանի որ «Որոգայթ Փառացի» բովանդակային վերլուծությունը մեր քննարկելիք հարցերի շրջանակից դուրս է, նշենք միայն, որ Շահամիրյանի գլխավոր նպատակը «արհեստին շարադրօղաց և դպիր աշակերտելոց ի թմրութենէ ծուլութեան քնոյ...»²² արթնացնելն էր, հայրենասիրական-ազատագրական հայացքների տարածումը և իրավական գիտակցության բարձրացումը²³:

Այս տեսանկյունից հատկապես ուսանելի դիտողություններ կան 1784 թ. Տրիեստում տպագրված Կուլիելմոս Ռոբերտսոնի «Վիպասանութիւն Ամերիկոյ» երկհատոր աշխատության «Առ բարեսէր հայկազեան ընթերցօղս» առաջաբանում: Գիրքը տպագրվել է Մինաս Գասպարյանցի թարգմանությամբ և Բաբիկենց աղա Հովհաննես Ջուղայեցու ծախսերով: Գրքի տպագրողն Ամերիկայի պատմության օրինակով փորձում է ցույց տալ, «թէ որպէս աշխարհս իբրև գտղայ յանկատարութենէ առ կատարելութիւն յառաջացաւ. և թէ որքան պարտական է մարդս քաղաքական դաստիարակութեան և ուսման. և թէ որպէս արհեստք, գիտութիւնք և օրէնք կատարելագործեն զբնութիւնն, և հանեն զմարդն գրեթէ յանբանական վիճակէ. և թէ զհարդ առ անդորրութիւն մարդոյ կարևոր են օրէնք և ստորակարգութիւնք. և թէ առ ի իմանալ զօգուտ կարգին, որ միացուցանէ զգօրութիւն բազմութեան և բաւականս գործէ առ իւր վախճան, բազում մտաւոր լուսաւորութեանց և ներհմտութեանց պէտք են, զոր ազգք տխմարք ոչ իմանան. և զոր երջանկութիւն ինքեանց համարին զազատ և զինքնագլուխ լինելն` այնու ընդ մեծագոյն թշուառութեամբ զանձինս արկանեն. և իբր յիմար և անգոր ազգ յամենեցունց արհամարհին և զոհն թշնամեաց լինին»²⁴:

Փաստորեն աշխատությունը թարգմանվում ու տպագրվում է առհասարակ դաստիարակչական նկատառումներից ելնելով: Ինչպես մարդիկ են քաղաքակրթվում արհեստների, գիտությունների և օրենքների միջոցով, նմանապես և հասարակությունը կարող է ներդաշնակ գործառնել օրենքների և կարգուկանոնի միջոցով: Ազգերի ու մարդկանց ճշմարիտ երջանկության գրավականը ազատ ու «զինքնագլուխ» լինելը չէ, ասում է թարգմանիչը. սա հասկանալու համար պետք է մտքի լուսավորություն ունենալ, հակառակ դեպքում ազգերը դատապարտված են կործանման: Այս միտքը ոչ այլ ինչ է, քան միավորման ու համախմբման կոչ: Չէ՞ որ սա մի ժամանակաշրջան էր, երբ հայությունը չուներ անկախ պետություն, իսկ

²² Նույն տեղում, էջ 493:

²³ Այդ մասին մանրամասն տես **Գ. Մելքունյան**, Հնդկահայ լուսավորիչները ազգային նկարագրի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, թիվ 3, էջ 22-31:

²⁴ **Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 561:

հայ վաճառականներն էլ հիմնականում հանդես էին գալիս միմյանցից անջատ-անջատ՝ արևմտյան ու արևելյան երկրները կապող միջնորդի կարգավիճակով: Հայ վաճառականն Ամերիկայի վիպասանության միջոցով ցանկանում է իր գործընկերներին ու առհասարակ հայրենակիցներին հասկացնել, որ ցանկացած բնագավառում, այդ թվում և առևտրի ոլորտում հաջողության հասնելու լավագույն եղանակը միասնական հասարակական կառույց ունենալն է և որոշակի օրենքներով առաջնորդվելը: Այս ամենին հասնելու համար մեծ համբերություն է պետք: Ինչպես Կոլումբոսը համբերատարությամբ ու տոկունությամբ կարողացավ հասնել իր մեծագույն նպատակին, նույնպես և մյուսները պետք է անեն, չէ՞ որ «յորժամ գլուխ իրիք ընկերութեան առողջ է, բովանդակ քաղաքական մարմինն ի հանգստեան եղիցի. իսկ յորժամ ախտիւք իւիք վարակեալ իցէ, բոլոր մարմինն տագնապի»²⁵: Եթե նկատի ունենանք այն, որ 17-18-րդ դարերում հենց հայ վաճառականությունն էր, որ «հոգևորականությունից հետո կատարում էր խոշոր հասարակական դեր»²⁶, կարող ենք պնդել, որ այս աշխատությունը հասցեագրված էր հատկապես վաճառականությանը՝ միավորվելու և հայ ժողովրդին համախմբելու, կարգ ու կանոն հաստատելու հստակ պահանջով:

Իսկ կարգ ու կանոն պահպանել հնարավոր է ոչ միայն և ոչ այնքան իրավաքաղաքական գիտակցության բարձրացման, որքան բարոյական գիտակցության բարձրացման ու վեհ արժեքների սերմանման միջոցով: Սա նշանակում է, որ պետք է թարգմանվեին կամ կազմվեին ինքնուրույն փիլիսոփայական, մասնավորապես բարոյագիտական երկեր, որոնք ուսուցողական-դաստիարակչական ուղղվածություն կունենային: Ահա, 18-րդ դ. լույս են տեսնում նաև բարոյագիտական բնույթի մի շարք երկեր: Այդպիսիք էին Խաչատուր Էրզրունցու «Համառօտութիւն բարոյականի աստուածաբանութեան» երկը, որը տպագրվում է Շահիրիմանյան տոհմից Խոջա Սահրադի որդի ջուղայեցի պարոն Մուրադի միջոցներով՝ «ի յանջնջելի յիշատակ ինքեան, և բնաւից ընտանեաց, և ազգականաց իւրոց»²⁷ և «Առակք Եզրբոսի Փռիւզիացւոյ», «Տնօրէնութիւն մարդկային կենաց, որ և կոչի նոր առակք Սողոմոնեան» աշխատությունները, որոնք տպագրվում են Մարգար Շահիրիմանյանի միջոցներով՝ «ի յօգուտ և ի զբօսանս Հայկազեան բարեսէր ընթերցողաց»²⁸: Այս երկերում ընդհանուր առմամբ քննարկվում են մարդկանց վարքին առնչվող տարաբնույթ հարցեր, օրինակ՝ ի՞նչ պարտականություններ ունի մարդն իբրև անհատ, ի՞նչ պարտականություններ ունեն միմյանց հանդէպ ընկերները, ի՞նչ է կիրքը, և այլն: Նշված հարցերն առավել որոշակի ու հստակ պատասխաններ են ակնկալում հատկապես սահմանային իրավիճակներում, երբ մարդը փորձությունների է ենթարկվում: Եվ քանի որ վաճառականները հաճախ էին հայտնվում սահմանային իրավիճակներում և խորհելու առիթ ունենում մարդ անհատի պարտականությունների, առավել ևս ընկերների միջև

²⁵ Նույն տեղում, էջ 561:

²⁶ **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, Գիրք 2, Եր., 1973, էջ 523:

²⁷ **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան**, նշվ. աշխ., էջ 171:

²⁸ Նույն տեղում, էջ 553:

փոխհարաբերությունների մասին, ուստի այսպիսի գրականության լույսընծայումը ևս անմիջական առնչություն ունի հայ վաճառականության գործնական պահանջումներին բավարարման հետ: Չէ՞ որ առևտրական ճանապարհորդությունների ժամանակ հանդիպում էին բազմաթիվ փորձություններ, որոնց պետք է կարողանային ընկերովի ու միասնաբար դիմակայել: Իսկ մարդկային զոհեր լինելու դեպքում առաջանում էր նաև վաճառականի ունեցվածքը տնօրինելու հարց: Բացի այդ՝ անհրաժեշտ էր զբաղվել նաև հանգուցյալի դին արժանապատվորեն հողին հանձնելու հարցերով: Ցավոք, շատ հաճախ վաճառականները նույնիսկ գերեզմանի չէին արժանանում: Այդպիսին էր, օրինակ, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի հիմնադիր-բարերարներից Էդուարդ Ռաֆայել Ղարամյանը, որը Եվրոպայում ուսանող իր զավակներին այցելելիս ճանապարհին հիվանդանում է ու մահանում: Նավապետն այնքան էր ատում Ղարամյանին, որ նույնիսկ չի համաձայնում հայ ազգի մեծ բարերարի դիակը ափ հասցնել: Չնայած ընդամենը մեկ օրվա ճանապարհ էր մնացել ափ հասնելու համար, նա հրամայում է Ղարամյանի դին նետել ջուրը²⁹:

Բայց հոգեպես առողջ լինելուն զուգընթաց՝ անհրաժեշտ է նաև ֆիզիկապես առողջ լինել, իսկ հիվանդանալիս անհրաժեշտ է իմանալ առողջության վերականգնման հնարավոր ուղիների ու միջոցների մասին: Եվ ահա դարավերջին՝ 1793 թ., մեկ այլ վաճառականի՝ աղա Օհանջանի հովանավորությամբ լույս է տեսնում Պետրոս Քալանթարյանի «Բժշկարան համառօտ և բառարան» աշխատությունը, որի նպատակը «հայկասեռ և համասերունդ ազգակցաց արժանապատուից» ծառայելն էր: Այստեղ նկարագրված են ամենատարբեր հիվանդությունների դեմ պայքարելու եղանակներ, դեղորայք պատրաստելու մեթոդներ:³⁰ Բնականաբար, այսպիսի գրականության անհրաժեշտությունը ևս պիտի զգացվեր առևտրական երկարատև ճանապարհորդությունների ընթացքում, ինչն էլ դրդում է հայ վաճառականին հովանավորելու այդպիսի մի գրքի տպագրությունը:

Հատկանշական է, որ բժշկարանի վերջում զետեղված է նաև բառարան, որի մասին գրքի առաջաբանում հեղինակը գրում է. «Որքան կարողացայ գտանել՝ լատին անուանց դեղորդիցն՝ անուանակոչութիւնն, թէ հայկական և թէ՛ պարսիկ լեզուաւ, զայնս՝ յատկապէս փոքրիկ բառարանանման՝ այբբենական կարգիւ դասեալ, ի լատինէ ի հայ բարբառ և ի գիր. ընդ մասնաւորի սոյն գրքոյ Բժշկարանի՝ ի վախճանին համակցեցի. որ այն ևս՝ յուսան անպիտան ոչ լինել՝ մերս հայկազեանց»³¹: Այս բառարանից բացի, սակայն, հայ վաճառականության հովանավորությամբ տպագրվում էին նաև թուրքերեն-հայերեն, ռուս-հայերեն, հայ-ռուսերեն, հայերեն բացատրական և այլ բառարաններ, այբբենարաններ³²: Այսպիսի գրականության տպագրությունը ևս, բնականաբար, կրկին բխում էր հայ վաճառականից:

²⁹ Տե՛ս **Ռ. Սահակ Տեր-Մովսէսեան**, Մուրադ-Ռաֆայելեան վարժարաններու հարկարանայ յոբելեանը 1836-1936 և անոր գրական յուշարձանը, «Բազմավէպ», 1936, թիւ 8-12, էջ 175:

³⁰ Տե՛ս **Ն. Ոսկանյան, Զ. Կորկոտյան, Ա. Սավալյան**, մշվ. աշխ., էջ 683-685:

³¹ Նույն տեղում, էջ 684:

³² Տե՛ս, օրինակ, նույն տեղը, էջ 279, 394, 532, 617, 704:

ճառականության գործնական պահանջումներից: Աշխարհի տարբեր ժողովուրդների հետ բարեհաջող առևտուր կատարելու առաջին և ամենակարևոր պայմաններից մեկը, թերևս, նրանց հետ հաղորդակցվել կարողանալն էր, լեզվական գոնե տարրական կարողություններին տիրապետելը: Ուստի այս կամ այն երկիր մեկնելիս հայ վաճառականները նաև համապատասխան բացատրական բառարանների, այբբենարանների կարիք էին զգում:

Բառարաններից բացի, «ի պետս աստուածասէր վաճառականաց» լույս են ընծայվում նաև տաղարաններ ու քերականական գրականություն: Իր բազմազբաղ ու ծանր առօրյան թեթևացնելու և ավելի իմաստալից դարձնելու համար վաճառականը, ինչպես յուրաքանչյուր ոք, երբեմն ցանկանում էր իրականությունը գեղարվեստական գրվածքների միջոցով ներկայացված տեսնել, որոնք առավել խոսուն են ու ավելի ազդեցիկ: Ուստի վաճառականները հովանավորում են նաև տաղարանների տպագրությունը: Այսպես, 1681 թ. լույս տեսած Տաղարանի Հիշատակարանում թվարկելով Ջուղայից, Ագուլիսից և այլ վայրերից տասնվեց հովանավոր վաճառականների անուններ՝ Հովհ. Կոստանդնուպոլսեցին ասում է, որ «տեսանելով զիղձ և զդիտաւորութիւնս մերոց հայկազունեաց վաճառականաց, կամեցայ ի զանազանից բանաստեղծաց ժողովել զսոյն, և տպագրութեամբ բազմապատկել և ի լոյս ածել ի յգթօսանս նոցին»³³:

Բանաստեղծությունների ժողովածուներից գատ` լույս են տեսնում նաև քերականությանն առնչվող գրքեր: Օրինակ՝ Պաղտասար Դպիրի երկհատոր «Քերականութիւնը» այնքան մեծ պահանջարկ է վայելել, որ հայ վաճառականների հովանավորությամբ երեք տպագրություն է ունեցել. երկու անգամ տպագրվել է Կ.Պոլսում (1736-1738 թթ., 1771 թ.), մեկ անգամ՝ Մադրասում (1791 թ.): Քերականական գրականության հանդեպ ունեցած այսպիսի վերաբերմունքը թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ կիսագրագետ, երբեմն ոչ գրագետ վաճառականն ընդհանուր առմամբ, գուցե և սեփական կյանքի դառը փորձից ելնելով, լավ էր հասկանում գրագիտության նշանակությունը: Ուստի ջանք չէր խնայում իր հայրենակիցների շրջանում լրացնելու այդ բացը:

Այսքանով, անշուշտ, չեն սպառվում հայ վաճառականների նյութական աջակցությամբ լույս ընծայված գրականության մասնագիտական ու լրորտները, առավել ևս՝ այդ ոլորտներին վերաբերող գրքերի ցանկը: Բայց, կարծում ենք, այսքանն էլ բավական է հայ գրատպության գործում հայ վաճառականների ունեցած դերակատարության վերաբերյալ որոշ եզրակացություններ կատարելու համար:

Այսպիսով, առաջին հայատառ գրքերի տպագրության պատվիրատուների ու հովանավորների շարքում պատկառելի տեղ են զբաղեցնում նաև հայ վաճառականները: Նրանց նյութական աջակցությամբ, երբեմն նաև անմիջական մասնակցությամբ տպագրվել են բազմաթիվ գրքեր հատկապես մաթեմատիկայի, երկրաչափության, աշխարհագրության, տոմարագիտության, պատմագիտության, իրավագիտության, բժշկության, գրականության ու քերականության բնագավառներում: Իսկ սա փաստում է այն

³³ Խոյն տեղում, էջ 86:

մասին, որ նրանք առաջնահերթ ուշադրություն են դարձրել հատկապես այն գրականության տպագրությանը, որը բխում էր իրենց անմիջական գործնական պահանջունքներից: Ավելին, երբեմն չբավարարվելով միայն ֆինանսավորմամբ՝ հայ վաճառականները, ինչպիսին, օրինակ, Մարգար Շահրիմանյանն էր, ձեռնամուխ են լինում իրենց գործնական կյանքը կարգավորող գրքերի տպագրությանը՝ նաև անձամբ կատարելով թարգմանություններ:

АЙАРПИ АГАХАНИЯН – Роль купечества в армянском книгопечатании.

– При изучении ряда памятников, а также предисловий к книгам, изданным в 1512–1800 гг., выявилась роль, сыгранная в армянском книгопечатании купечеством. Среди заказчиков и покровителей первопечатных армянских книг обнаруживается значительно число купцов. Они покровительствовали по преимуществу тем изданиям, которые так или иначе соответствовали их деловым интересам. Прежде всего речь идёт о книгах в области математики (в частности геометрии), географии, летоисчисления, историографии, юриспруденции, медицины, литературы и грамматики.

HAYARPI AGHAKHANYAN – On the Problem of the Role of Merchants in the Armenian Typography. – Investigating the introductions and diaries of the Armenian books printed in 1512-1800, an attempt is made in the article to discover the role of merchants in the Armenian typography and a conclusion is made that the Armenian traders formed a considerable number among the clients and supporters of printing the first books in Armenian. And the traders principally supported the typography of the literature which arises from their immediate practical requirements, especially in the spheres of mathematics, geometry, geography, chronology, historiography, jurisprudence, medicine, literature and grammar.